# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1459

11.09.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբերի 3-ին այցելելով ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Աշտարակի ՁՊՎ, արձանագրել էր մի շարք թերություններ և խախտում:

*Թերություններ*՝

1. 2-րդ խցի սպիտակեղենը օգտագործված էր, իսկ 4-րդ խցինը՝ կեղտոտ:
2. 4-րդ խցի լվացարանը ամրացված տեղից պոկված էր:
3. Տեսակության սենյակում հարազատների համար նախատեսված մասում տեղադրված է մեկ աթոռ:
4. Ինչպես նախորդ այցելության ընթացքում, այնպես էլ այս այցելությանը, ճաշասենյակում բացակայում էր աման լվանալու հեղուկը, սառնարանը:
5. Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր շատ փոշոտ վիճակում:

Ներկայացված փաստերի վերաբերյալ Դիտորդական խումբը ունի թերությունները հաստատող համապատասխան լուսանկարներ և անհարժեշտության դեպքում կարող է տրամադրել:

*Խախտում*՝

Դիտորդական խումբը արձանագրել էր, որ դատաքննությանը մասնակցելու նպատակով Աշտարակի ՁՊՎ ընդունված յուրաքանչյուր կալանավոր ընդունվում է ՁՊՎ առանց բավարար հիմքերի, տվյալ դեպքում անտեսվում է <<Ձերբակալված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 3600
12 09 2014

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
[illegible]
ՄՏԻՑ թիվ 7235
«12» 09 2014 թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

6-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև ոստիկանության կողմից համապատասխան բաժիններին տրված հանձարարականի պահանջները, որի վերաբեյալ Դիտորդական խմբին տեղեկացվել էր 16.12.2013թ-ի թիվ 2/2-1-3540 գրությամբ: Բուն խնդիրը կայանում է նրանում, որ կալանավորված անձիք ՁՊՎ են ընդունվում դատավորի որոշմամբ, որտեղ նշված չէ ՁՊՎ ընդունելու պահանջը:

Վերը նշվածի վերաբերյալ ներկայացնենք մեկ օրինակ. դատավոր Ս. Մնոյան, որոշեցի *<<ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ ուղեկցող դասակի միջոցով վերադարձնել ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ –ի կալանավոր Ա.Ա.Ա.-ին և 2014թ- ի հուլիսի 8-ին ապահովել վերջինիս ուղեկցումը ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Աշտարակ քաղաքի նստավայր, 2014թ-ի հուլիսի 8-ին ժամը 12.00-ին նշանակված դատական նիստին մասնակցելու համար>>: /կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկարներ -1,2/*:

Նշվածի վերաբերյալ ցանկանում ենք ավելացնել մեկ ուշագրավ փաստ ևս, որ Աշտարակի բաժնի կողմից դատավոր Ս. Մնոյանի մեկ այլ որոշում հիմք է ընդունվել և անձը ընդունվել է ՁՊՎ այն դեպքում, երբ դատավորը որոշման մեջ նշում է, որ 2014թ-ի հունիսի 24-ին ապահովել կալանավոր Ա.Ա.Ա.-ի ուղեկցումը Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Աշտարակ քաղաքի նստավայր՝ 2014թ-ի հունիսի 26-ի ժամը 15.00-ին նշանակված դատական նիստին մասնակցելու համար: Նշված դատարանի դատավոր Ս. Մնոյանը իր որոշմամբ ցանկացել է, որպեսզի Ա.Ա-ն 24.06.2014թ-ին տեղափոխվի տվյալ դատարան և պահվի այնտեղ մինչև 26.06.2014թ-ը, որպեսզի տվյալ օրը, ժամը 15.00-ին մասնակցի դատական նիստին: Նշանակում է, որ անձը մոտ 2 օր պետք է պահվի դատարանի դահլիճում:

Խնդրում ենք մեկնաբանել, թե տվյալ որոշումը, ինչպես կարող է հիմք հանդիսանալ, կալանավորին ՁՊՎ ընդունելու համար, այն դեպքում, որ հենց այդ որոշումը կայացվել է սխալներով և այդ ամենը պարունակում է անլրջություն:

Խնդրում ենք ներկայացվածի վերաբեյալ տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված
անձանց պահելու վայրերում վերահսկողություն
իրականացնող հասարակական Դիտորդական
խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ**

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-2343 «25» 09 2014թ.

Ձեր 11.09.2014թ. թիվ 2621/1459 գր.

**ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Համիկ Սահակյանին**

**Հարգելի տիկին Սահակյան**

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 03.09.2014թ. ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում ու Արագածոտնի մարզային վարչությունում, որի կապակցությամբ տրվում են հետևյալ մեկնաբանությունները.

1.2. Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունից ստացված գրության համաձայն ոստիկանության Աշտարակի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ ընդունված անձանց սպիտակեղենը տրվում է պոլիէթիլենային տոպրակների մեջ և մաքուր վիճակում (ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 26-րդ կետի 2-րդ ենթակետ): Դիտորդների խմբի այցելության ընթացքում 2-րդ խցի սպիտակեղենը եղել է չօգտագործված, 4-րդ խցի սպիտակեղենը՝ մաքուր, իսկ ՁՊՎ-ի 4-րդ խցի լվացարանը եղել է ամրացված: Վերը նշված թերությունները հավաստող լուսանկարների առկայության դեպքում խնդրվում է դրանք տրամադրել ՀՀ ոստիկանության շտաբին:

3. ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի որևէ կետով սահմանված չէ քանի աթոռ պետք է տեղադրված լինի տեսակցության սենյակում, այդ իսկ պատճառով սենյակում՝ հարազատների համար նախատեսված մասում տեղադրված է հատակին ամրացված մեկ աթոռ, իսկ անհրաժեշտության դեպքում տրամադրվում են նաև լրացուցիչ աթոռներ՝ ըստ տեսակցության եկած անձանց թվաքանակի:

4. ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի որևէ կետով նախատեսված չէ ճաշասենյակում սառնարանի առկայությունը, սակայն բաժնի հերթապահ մասում առկա է սառնարան և անհրաժեշտության դեպքում մթերքները պահվում են այնտեղ: Աման լվանալու հեղուկը դիտորդների խմբի

այցելության ժամանակ դրված է եղել լվացարանի պահարանի մեջ և դիտորդների խմբի կողմից չի պահանջվել այն ներկայացնել:

5. Ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ-ում յուրաքանչյուր օր ժամը 07.30-ին իրականացվում են մաքրման, իսկ սանհանգույցում՝ ախտահանման աշխատանքներ և ՁՊՎ-ն մշտապես գտնվում է մաքուր վիճակում:

Հարկ է նշել, որ ՁՊՎ-ներ կատարած այցելությունների ընթացքում թերություններ հայտնաբերելիս նպատակահարմար է դրանք անմիջապես ներկայացնել ՁՊՎ վարչակազմին և թերությունները վերացնելու ուղղությամբ համագործակցել վերջիններիս հետ, ինչպես նախատեսված է 12.06.2009թ. <<ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության էթիկայի կանոններ>>-ի 4-րդ գլխի 4.2 կետում (<<Անհրաժեշտ է գործուն կերպով համագործակցել ՁՊՎ-ների վարչակազմերի հետ և ձգտել նրանց հետ մշտապես համապատասխան երկխոսություն հաստատել՝ դիտորդական խմբի առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման համար>>): Նման գործելաոճը կնպաստի, որ արձանագրված թերություններն ավելի արագ վերացվեն տեղում, որն իր հերթին կբարձրացնի ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքների պահպանման արդյունավետությունը:

Կալանավոր Վ.Դանիելյանին ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ-ում պահելու հիմք է հանդիսացել դատավոր Ս.Մնոյանի որոշումը: Չնայած այն հանգամանքին, որ դատավորի կողմից կայացրած որոշման մեջ բառացիորեն նշված չէ, որ կալանավոր Վ.Դանիելյանը պահվի ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ-ում, սակայն որոշումը և կից գրությունը հասցեագրված են եղել ոչ միայն ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ պետին և ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետին, այլ նաև՝ ոստիկանության Աշտարակի բաժնի պետին, որն ինքնին նշանակում է, որ կալանավորված անձին ս/թ հունիսի 24-ին ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ից ուղեկցելու և մինչ ս/թ հունիսի 26-ը դատական նիստին ներկայացնելու ընթացքում (շուրջ 2 օր) պետք է պահել ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ-ում, այլ ոչ թե դատարանի դահլիճում:

**ՀՀ ոստիկանության շտաբ**